ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԳԵՐ. Տ. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՌԱԴԻՈ-ԵԼՈՒՅԹԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Լիբանանի հայոց առաջնորդ գեր. տ. Արտավազդ արքեպիսկոպոսը Հայաստանից վերադառնալով իր պաշտոնատեղին, իր տպավորությունները Հայաստանի մասին ռադիո-ելույթով հաղորդել է սփյուռքի հայության։ Գեր. տ. Արտավազդ արքեպիսկոպոսի քարոզը զետեղում ենք նույնությամբ՝ վերցնելով «Զարթոնք» թերթից (2634, 1945 թիվ)։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

«Քանզի մենք շատերուն պես չենք՝ որոնք Աստծո խոսքին վաճառականները կուզեն ըլլալ, այլ միայն անկեղծությամբ, Աստուծո առջև Քրիստոսով պիտի խոսինք։ ...Ոչ թե մելանով կուզեմ գրել ու բանով խոսիլ, ոչ թե քարեղեն տախտակներու վրա, այլ ձեր սրտին մարմնեղեն տախտակներուն վրա»։

(Բ. Կորնթ. 17)

Բարեգեպ հանդիպումով մը այս առավոտ բոլոր հայ եկեղեցիներեն կարդացվեցավ Պողոս առաքյալի այն համարը՝ որ իմ խոսքերուս ուղղությունը պիտի ճշտեր։ Վասն զի ես ալ, Առաքյալին պես, պիտի չուզեմ խոսքի վաճառական ըլլալ, այլ խոսիլ ճշմարտությունը միայն ու իմ խոսքերս քանդակել ոչ թե քարեղեն տախտակներու վրա, այլ իմ ունկնդիրներուս սրտի մարմնեղեն տախտակներուն վրա։

Խորհուրդ *կնշանակե ուղիղ միտք, իմաստություն, դատողություն, իրատեսություն ու հեռատեսություն։ Հակառակը կըլլա* **անխորհուրդ**, *անիմաստ ու անհեռատես։ Կրսենք հաճախ՝ ինչ անխորհուրդ մարդ է, սա ինչ անխորհուրդ գործ է, որ համազոր է անխելք գործի։* **Խորհրդային** *Հայաստան, անկախ իր պաշտոնական նըշանակութենեն, կհայտնաբերե Հայաստան մը* **խորհուրդներով**, *այսինքն իմաստուն և հեռատես խորհրդականներով, պետական իմաստուն ժողովականներով ու պաշտոնատարներով կառավարվող։ Ու ես այդ խորհուրդն ու իմաստությունը տեսա իմ Հայաստան և Մայր Աթոռ գտնվածս բովանդակ միջոցին, խորհուրդ մը՝ որ հաջողեցավ ամբողջ քառորդ դար խաղաղության, բարությունն և բարձր ու մնայուն մշակույթի բացառիկ շրջան մը ապահովել հայրենիքի բոլոր զավակներուն և սրտագին գոհունակություն՝ սփյուռքի բոլոր* **իրատես** *հայերուն։ Այդ իմաստուն խորհուրդով էր, որ հայ եկեղեցին հովանավորող ու ներկայացնող Ազգընտիր Տեղակալը, Գեվորգ Սրբազան, կրցավ մինակը, ծերունի, հավատարիմ միակ միաբանով մը, անցնիլ բավական դժվարին շրջաններե ու, պարագաները իրենց իսկությանը մեջ դիտած, հայ եկեղեցու նավը փոթորկոտ ծովերու վրայեն անցնելով հասցնել ապահով նավահանգիստ ու կարճ ատենի մեջ կազմել փոքրիկ, բայց եռանդուն ու հավատարիմ միաբանություն մը՝ ամբողջ տասն վարդապետներով, որոնց հինգը, արտասահմանի այլ հինգերու հետ եպիսկոպոս ձեռնադրվեցան հուլիսի 1-ին։ Հայ եկեղեցու պետին իմաստուն խորհուրդովը կազմվեցավ «Սասունցի Դավիթ» հրասայլային զորասյունը՝ որ անգամ մըն ալ ապացուցը տվավ ցեղին դյուցազնական ոգիին ու տիեզերահռչակ դարձուց հայ զորավարներուն ու մարդիկներուն դիմադրական կարողությունը։*

Ու որպես զի Մայր Աթոռը կարենա իր սիրտին ձայնը արձանագրել հայկական բոլոր կենտրոնացումներուն մեջ ու առիթ տալ նորակազմ միաբանության և հայրենիքի գրականագետներուն իրենց մտքի հղացքը ի հանդես բերելու կրոնական հանդեսի մը մեջ ևս, այդ միևնույն խորհրդային իմաստությունը ահա երկրորդ տարին է, որ

«Էջմիածին» պաշտոնաթերթը կդնե իր մը-տավոր որդիներու տրամադրության տակ։ Բայց այսքան չէ միայն Մայր Աթոռի իմաստությունը, այլևս պատմական դեմք դարձած Տեղակալը, պետք էր մտածեր նաև հայ եկեղեցին օժտելու հոգևոր ճեմարանով մը, տպարանով մը և տարիներե ի վեր զգացված բոլոր պակասներու լրացումով։ Ու այս իմաստուն և քաղաքավար ու հարմարող քաղաքականության շնորհիվ էր, որ շրջակա բոլոր շենքերը, բացի Գեվորգյան հեմարանի շենքերեն՝, որոնք իբր հիվանդանոց կծառայեն հայ և խորհրդային վիրավորներու։ Մինակ մնացած անձ մը կարողացավ ընել այս բոլորը, և վստահ իր հոգնիլ ու հուսահատիլ չգիտցող մարդու անսպառ կորովին՝ Մոսկվա անցավ ի խնդիր ավելի մեծ ու հավերժական ակնկալության պսակումին։ Ու էրր Քրեմլինի պալատին մեջ նստեցավ դարուս մեծագույն

Արտավազդ արքեպիսկոպոս

Մայր Աթոռ կրցավ իր կարիքները բացատրել Երևան ու մինչև Մոսկվա, որոնք սիրով վեհարանին վերադարձուցին պետական—գինվորական սպասարկությանց հատկացված բոլոր եկեղեցիները, վանքերն ու վանքերու սեփական այգիները և Մայր Տաճարի հանճարին ու բարերարին մոտը, մաքաջախտ Ստալին, իմաստորեն կարդաց իր հոգևորական հյուրի սրտին մեջ Հայ տառապած ցեղին բովանդակ ակնկալությունները, արդարություն գտնելու իր տենչը։ Բայց պետք էր տեսնել, թե որպիսի կար-

գավորությամբ և խորհուրդով կրցեր էր աշխարհի ամենեն հեռու վայրերեն իսկ բերել, Մայր Տաճարի սրտին վրա բևեռել եկեղեցական ու աշխարհական վաթսունե ավելի պատգամավորներ, անոնց ցույց տալու համար անհնարին հրաշքը, և անոնց ու Հայաստանի նույնքան և ավելի թվով երեսփոխաններով վերցնելու տարիներե ի վեր Մայր Աթոռը ծածկող սուգի քողը:

Կուզեի ըսել նույնպես, որ ես այդ խորհուրդը զոր գնահատեր էի տարիներե ի վեր, ի հեռուստ, տեսա Հայաստանի վարչական կազմին վրա: Իբր շոշափելի արդյունք այդ իմաստության, ահա քառորդ դարե ի վեր Հայաստանի սահմանները խաղաղ ու ապահով: Ու ապահով սահմանե մը ներս միայն կարելի էր ավերված և հաջորդական պատերազմներու հետևանքով նվազած հայրենիք մը կենդանացնել, փյունիկի մը նման, իր մոխիրներուն ու ավերակույտերու վրա: Ու մենք տեսանք վերածնված, երիտասարդ ու կենսունակ հայրենիքը, ուր իմ տպավորությունս այն եղավ, թե միակ ծնողներու զավակները կրնան եղած ըլլալ երկրին բոլոր հայորդիները, բոլորն ալ սնած միատեսակ գաղափարաբանությամբ, յուրաքանչյուրը բոլորին համար ու բոլոր հայրենիքը իր զավակներուն համար: Ու նման պայմաններու և իմաստուն վարչականության մը մականին տակ շատ բնական էր, որ հրաշալի հառաջդիմություն մը պիտի փթթեր գիտության, դպրության և արվեստի, մասնավորաբար Երևան մայրաքաղաքին և գլխավոր քաղաքներու մեջ՝ զանոնք վերածելով եվրոպական ոստաններու:

Ահա իմ և մեր բոլորին տեսած ու շոշափածները մեր երիտասարդ հայրենիքին մեջ, իբր արդյունք խորհուրդի և իմաստուն ղեկության, կորովի և անհուսահատ ջանքերու:

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ, 20 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— Էջմիածնում տեղի ունեցած հայ եկեղեցական ժողովի ամերիկյան երեք պատգամավոր, որոնք Սովետական Հայաստանում և Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի հայ համայնքներում կատարած չորս ամսվա ուղևորությունից հետո վերջերս վերադարձել են ԱՄՆ, հոկտեմբերի 18-ին ելույթ են ունեցել «Ամերիկյան Հայկական Ազգային Խորհրդի» կողմից կազմակերպված պրես-կոնֆերանսում: Նրանք բարձր գնահատական են տվել Սովետական Հայաստանի արդյունաբերության զարգացման և լուսավորության բնագավառում ձեռք բերված հաջողություններին: Պատգամավորները ժողովը բնութագրել են որպես պատմական իրադարձություն հայ եկեղեցու կյանքում: Նրանք կոչ են արել Սովետական Հայաստան վերադարձնել ամբողջ աշխարհում ցրված մեկ ու կես միլիոն հայերին և այդ նպատակով պահանջել, որ վերադարձվեն Սովետական Հայաստանին Թյուրքիայի կազմի մեջ մտցված հայկական բոլոր հողերը:

Պատգամավորներ Թերզյանը, Սելյանը և Ջանկալյանը իրենց հայտարարության մեջ նշել են՝ «Էջմիածնում նորերս տեղի ունեցած ժողովը ցույց է տալիս, որ Սովետական Հայաստանում գոյություն ունի կրոնի ազատություն: Ժողովում բոլոր վիճաբանությունները տեղի էին ունենում ազատ և անկախ պայմաններում՝ առանց պետության միջամտության, որը ցարական ռեժիմի ժամանակ գոյություն ունեցած դրության կատարյալ հակապատկերն է, երբ ցարը հաստատում էր այսպես կոչված պատգամավորների ընտրությունը: Հայկական պատմության մեջ առաջին անգամ աշխարհի բոլոր հայ համայքները մասնակցել են ժողովին»:

Պատգամավորները նկարագրել են Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումները: Նրանք նշել են, որ Սովետական Հայաստանի բնակչությունը ցարական ռեժիմի տապալումից հետո կրկնապատկվել է և որ Սովետական Հայաստանում «ստեղծվել են այնպիսի մասշտաբի արդյունաբերություն և կուլտուրա, որոնք գերազանցում են մարդկային երևակայությունը»: Ընդգծելով Սովետական Հայաստանի տըն-